Հավելված 1.

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՊԱՀՊԱՆՈՒՄՆ ՈՒ ՓՈԽԱՆՑՈՒՄԸ ՍՓՅՈՒՌՔՈՒՄ. ԶԵԿՈՒՅՑ[1]

Ինչպե՞ս է ընկալվում և սահմանվում հայկական ինքնությունը:

Ըստ Հրաչ Չիլինկիրեանի՝ հայ համարվելը մի մեծ «փաթեթ» է, որը տարբեր պարունակություն ունի սփյուռքի տարբեր ներկայացուցիչների համար: Սակայն ամենից հաճախ հայկական ինքնությունը կամ հայկականությունը սահմանվում է հետևյալ հատկանիշներով՝

- Ինքնությունը մեծապես սահմանվում է հայկականության տարրի միջոցով, որտեղ ընտանիքը, լեզուն և մշակույթը հայկական ինքնության որոշիչ բաղադրիչներն են:
- Քրիստոնեությունը և հայ եկեղեցին հայկականության կարևոր կողմեր են, սակայն գոյություն ունեն կրոնական ընկալումների լայն շրջանակ և հոգևորության ընկալումների ավելի նուրբ մոտեցումներ:
- **Հայոց լեզուն և մշակույթը հայ լինելու և հայ համայնքին պատկանելու կարևորագույն մասն են, և բարձրորակ հայկական կրթության պահանջարկը մեծ է:**
- Հստակ տեսլական ունեցող ղեկավարությունը և ավելի շատ մշակութային ու կրթական միջոցառումները մեծ պահանջարկ ունեն համայնքային կյանքում:
- Հայաստանը՝ որպես անկախ պետություն և երկիր, Սփյուռքի համար կարևոր հենակետ է:

Ավելի կոնկրետ, 2019թ. Հայկական սփյուռքի հարցման համաձայն՝ *հայոց լեզուն* համարվում է հայկական ինքնությունը սահմանելու երկրորդ միջոցը՝ *ընտանիքից* հետո:



Ի՞նչպես եք բնորոշում Ձեր հայկական ինքնությունը:
n=2,697

[1] Փաստաթուղթը մշակվել է Հայկական Սփյուռքի Հարզախույզի վիճակագրական արդյունքների և որակական վերլուծության հիման վրա:

Հայոց լեզու

Վերջին տարիներին աճում է մտահոգությունը հայերեն խոսողների թվի նվազեցման և Սփյուռքում հայկական դպրոցների փակման առնչությամբ: 2019թ. Հայկական Սփյուռքի հարցման արդյունքների համաձայն, սակայն, հայոց լեզվի և մասնավորապես արևմտահայերենի օգտագործման պատկերը դրական է:

Հարցախույզը լեզուների օգտագործման վերաբերյալ պարունակում մի շարք հարցեր: Մասնակիցներին հարցրել էին, թե որքան վարժ են խոսում հայերեն, ինչպես նաև թե ինչ լեզվով են հաղորդակցվում իրենց ամուսինների/զուգընկերների, ծնողների, տատիկ-պապիկների, երեխաների հետ: Հարցման մասնակիցների 53%-ն ասել է, որ *վարժ* խոսում է հայերեն, իսկ 15%-ը նշել է, որ կարծում է, որ *միջին* մակարդակի է տիրապետում հայերենին:



Ինչպե՞ս կգնահատեիք, թե որքան վարժ եք խոսում հայերեն: n=2,666

Սերունդների ներկայությունը, ինչպես ցույց է տվել հարցումը, մեծ ազդեցություն ունի հայերենի իմացության վրա: Ներգաղթյալ սերնդի շրջանում հարցվողների 85%-ը վարժ խոսում է հայերեն, 9%-ը՝ միջին մակարդակի է խոսում, 3%-ը՝ տարրական հմտություններ ուներ, 1%-ը մի քանի բառ գիտեր, և միայն 2%-ը ընդհանրապես չի խոսում հայերեն: Հակառակ պատկերն է նկատվում առաջին ներգաղթյալների թոռների շրջանում. 10 հարցվողից միայն 4-ն է նշել, որ վարժ խոսում է հայերեն (39%), 15%-ն ուներ միջին հմտություններ, 12%-ը՝ տարրական գիտելիքներ, 21%-ը ընդամենը մի քանի բառ ու արտահայտություն գիտեր, իսկ 13%-ը ընդհանրապես հայերեն չէր խոսում:

Հարցում անցկացված բոլոր համայնքներում միասին 10 հարցվողից 8-ը մանուկ հասակից սովորել է կամ փորձել է սովորել հայերեն (78%): Բոլոր հարցվողների շրջանում 58%-ը հայկական դպրոց հաճախելու 6 կամ ավելի տարվա փորձ ուներ, իսկ 29%-ը երբեք չէր հաճախել հայկական դպրոց կամ որևէ արտադասարանային կամ կիրակնօրյա դասերի: Քանի որ վերջին տարիներին Սփյուռքում մի քանի հայկական դպրոցներ են փակվել, հարցումը ցույց է տալիս, որ



Փոքր ժամանակ հաճախե՞լ եք հայկական դպրոց կամ արտադասարանական դասերի/շաբաթ-կիրակի անցկացվող դասերի: Եթե այո, որքա՞ն ժամանակ: n=2,589

հայկական դպրոցների խիստ կարիք կա, որտեղ կդասավանդեն հայոց լեզու և մշակույթ, սակայն նաև կլինի բարձրորակ հանրակրթություն:

Հայկական դպրոցներ

Այն հարցին, թե համայնքների համար ինչ միջոցառումներ են անհրաժեշտ, հարցվողների 40%-ից ավելին որպես հիմնական առաջնահերթություն նշել է *դասախոսություններ և միջոցառումներ նվիրված հայոց պատմությանը, լեզվին, մշակույթին, արվեստին, երաժշտությանը, խոհանոցին, պարին և այլն* (42%), իսկ գրեթե 1/3-ն ընգծել է հայկական դպրոցների անհրաժեշտությունը:



Ի՞նչ միջոցառումների կարիք կա Ձեր տեղական հայկական համայնքում:
n=2,597

Հարցվողներին նաև խնդրել են մատնանշել իրենց համար երեք հիմնական առաջնահերթությունները տրված ցանկից, թե հայկական դպրոցները ինչ պետք է տրամադրեն երեխաներին: Ընդհանուր առմամբ, հարցվողների մոտ երեք քառորդը (71%) նշել է «հայոց լեզու սովորելը» որպես գլխավոր ակնկալիք:



Ի՞նչ կուզենայիք, որ հայկական դպրոցները տրամադրեն երեխաներին:
n=2,697

Ըստ Վահե Սահակյանի՝ հայոց լեզվի և մշակույթի դասավանդումը Սփյուռքի համար արդեն վաղուց իսկ մարտահրավեր է: Յուրաքանչյուր համայնքի առանձնահատկությունները, արևելահայերենն ու արևմտահայերենը, որոնք օգտագործվում են առանձին վայրերում, և այլ գործոններ, ինչպիսիք են առաջադեմ ուսուցման և տեխնոլոգիայի վրա հիմնված ռեսուրսների և որակավորված ուսուցիչների հետ կապված սահմանափակումները, բարդացնում են իրավիճակը: Սակայն առավել խնդրահարույց է բարձրորակ հանրակրթության ակնկալիքն իրականություն դարձնելը: Այս առումով տարբեր երկրների հայկական դպրոցները մրցում են տեղի ոչ հայկական դպրոցների հետ մի շարք չափանիշներով, որոնք էապես տարբերվում են երկրից երկիր, նույնիսկ նահանգից նահանգ խոշոր երկրների պարագայում, ինչպիսիք են Կանադան կամ ԱՄՆ-ն:

Ըստ Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի՝ այսօր աշխարհի ավելի քան 100 երկրներում բնակվում է շուրջ 7 մլն հայ, գործում են տասնյակ համահայկական ու հոգևոր, հարյուրավոր համայնքային ու հայրենակցական կառույցներ, լրատվամիջոցներ, շուրջ 1000 մեկօրյա և ամենօրյա դպրոցներ, գիտական ու կրթական հաստատություններ, մարզական ու մշակութային միություններ, բարեգործական ու հասարակական-քաղաքական կազմակերպություններ: